ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«09» 10 2025թ. N 20/662

«ԵՐԿԱԹԵ ՇՈՒԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա. Սագրադովին,
ՀՎՀՀ 00505745
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 2փ., 19տ.

Հարգելի՛ պարոն Սագրադով

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԵՐԿԱԹԵ ՇՈՒԿԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) (ՀՎՀՀ 00505745, գործունեության հասցե՝ ք. Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 2փ., 19տ.) միջև 27.02.2025 թվականին կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է (N 3 չափաբաժնով՝ 1056000 (մեկ միլիոն հիսունվեց հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 1000 լիտր շարժիչի յուղերի մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 և 2.4.4 կետերի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ 30.06.2025թ.:

«ԵՐԿԱԹԵ ՇՈՒԿԱ» ՍՊԸ-ին 27.08.2025թ. N 20/555 գրությամբ տրվել է ողջամիտ ժամկետ՝ մինչև 2025թ. սեպտեմբերի 8-ը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ վճարելով նաև Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը: Սակայն, առ այսօր, Վաճառողի կողմից չեն իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի մատակարարվել Պայմանագրի N3 չափաբաժնով նախատեսված 1056000 (մեկ միլիոն հիսունվեց հազար) ՀՀ դրամ արժողությամբ 1000 լիտր շարժիչի յուղը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը, իսկ Օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ/ ենթակետը և 8.11 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է 27.02.2025 թվականին կնքված N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ-2» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, **որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի կայացնում և չի ներկայացնում լիազորված մարմին:

Բացի այդ, <<ԵՐԿԱԹԵ ՇՈՒԿԱ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն փոխանցել 43824 (քառասուներեք հազար ութ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «ԵՐԿԱԹԵ ՇՈՒԿԱ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00505745, գործունեության հասցե՝ ք. Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 2փ., 19տ.) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 170000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 255000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան